ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4
«Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-19/16-ՇԻՆԱՆՅՈՒԹ » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան 17 դեկտեմբերի 2019թ.

ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ժ. Պապոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մարգարյան, Լ. Քոթանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>
(Ժ. Պապոյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.<u>Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին</u>
(Ժ. Պապոյան)

Ընդունել ի գիտություն, որ 16.12.2019թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

«Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-19/16-ՇԻՆԱՆՅՈՒԹ » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	<u>Ընտրված մասնակիցներ ճանաչել</u> ՝	
1	<<Օպտշին>> ՍՊԸ	1,2,4,5,9
2	<<<Էկոմիքս>> ՍՊԸ	3,8,11,14

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3.Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին
(Ժ. Պապոյան)

<<Գնումների մասին>> << օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Ժ. Պապոյան)

«Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-19/16-ՇԻՆԱՆՅՈՒԹ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում <<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում Երևան, Տիգրան Մեծի 36ա հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ժ. Պապոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մարգարյան

Լ. Քոթանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

ProTender©
www.protender.am